

ուրոյն դոյութեան ու յառաջադիմութեան :

Կուզար Արեւմուտքէն դարերու մեծագոյն գաղափարը, որ դեռ Նազովրեցին շնորհներ էր մարդարէական բերնով, որ սակայն կը մնար ձայն բարբառոյ, կը խոշտանգուէր ու կը մարէր տմարդի հայրածանքներու, զանգուածային նահատակութիւններու արհաւիրքին մէջ, կը խոշտանգուէր երբեմն նոյնիսկ Քրիստոսի ըստաւորներու, Պապի, եկեղեցու նիւթած արիւնսպարտ խարոյկներուն վրայ... Կուզա՛ր այդ մեծ գաղափարը — համաշխարհային եղբայրութեան — որ կ'արծարծէին դեմոկրատ ու ընկերվար հատուածները արեւմտեան ազատ բեմերէն, — գաղափար մը, որ դարձեր էր կարգախօս ամբողջ դարու եւրոպական դրահանութեան, ժամ ժակ Ռուսոյէն մինչեւ Փլանսական համբուսուոր Պառնասը, մինչեւ անոր ազատական ու հանրապետական պարագլուխը՝ Վիտոր Էլիպո :

Կուզար Արեւմուտքէն ազատախոհներու (Libre-Penseurs) յաղթական վարդապետութեան շունչը, թշնամի, կոյր ու հինցած դաւանանքներու անհատ հակառակորդ կրօնա-կղերական ազանդականութեան ու նեղմտութեան, կուզար այդ լայնսիրտ, փրկարար վարդապետութիւնը, որ ի դէմս դրողներու, փիլիսոփաներու երկայնաձիգ թափօրի մը — սկսած Ֆոյերբախէն ու Շարբուզէն — կը խորտակէր կեղծ, խեղաթիւրուած քրիստոնէութեան շինծու կառուցուածքը, կը վերականգնէր Սիրոյ Վարդապետութիւնը իր ջինջ, համամարդկային, տրեղերական իմաստով, կը ջնջէր արուեստական խրամատները կաթոլիկի, ուղղափառի, բողոքականի, մովսիսականի, հաւատացողի եւ անհաւատի միջեւ եւ մոլեգնօրէն կը ծառանար այն տխուր, անապատական, մարմնամերժ ու կենտամերժ գաղափարին դէմ, որ մէկն է ժամանակակից քրիստոնէութեան ղեկավարող սկզբունքներէն. կը ծառանար այն ծոյլ ու ամուլ, ճակատագրապաշտ հաւատամքին դէմ, որ կը դրժէ, կ'արհամարհէ ներկայ կեանքը եւ կը հռչակէ երկնային դոյութեան հրապոյրները. կը ծառանար բոլոր մահարոյր, սին ու դատարկ ֆէտիշներու դէմ եւ կը հռչակէր զուարթ, կենսուրախ աշխարհահասցեաց մը, կ'արծարծէր անդու ու առնական միգի,

ազնիւ ու արգասաւոր աշխատանքի փիլիսոփայութիւնը, — կեանքի առողջ, լուստես եւ ըստեղծագործ փիլիսոփայութիւնը :

Եւ մենք կը տեսնենք այդ փրկարար վարդապետութիւններու շունչը Բաֆֆիի մէջ, «Խենթ»ի «Վարդանի երազ»ի մէջ, «Կայծեր»ի եւ այլ գրուածքներու մէջ :

Կը տեսնենք այդ վարդապետութիւններու շունչը Մելիքզադէի հրապարակախօսական գրուածքներում, տպուած 80-ական թուականներուն, «Մշակ»ի մէջ, ընդարձակ, բանասիրական յօդուածներ, որոնք աչքի կը զարնեն իրենց լրջութեամբ ու զեղեցկութեամբ : Այն ժամանակուան մեր հրապարակագիրներէն ոչ մէկը զրած է այդպիսի տեսութիւններ կրօնի, կղերի, ազատ մտքի, հոգեւոր ու աշխարհիկ գաղափարներու շուրջ : Այդ տպաւորութիւն ստացայ, երբ ասկէ վեց տարի առաջ Ս. Ղազարի դրաղարանի մէջ առաջին անգամը կը կարդայի 80-ական թուականներու «Մշակ»ը : Չեմ յիշեր, տարբարատար, Մելիքզադէի յօդուածներու ճիշդ թուականը :

«Եկեղեցականը հերքում է ներկայ աշխարհը, նրա հայրենիքը երկինքն է», — կ'ըսէ Ասլանը իր մի երկար, իմաստալից ճառի մէջ, ձգտելով բացատրել իր ունկնդիրներուն, թէ ինչո՞ւ հայ կղերին խորթ է հայրենիքի գաղափարը, հայրենիքի ազատագրութեան դործը :

«Եկեղեցականը միշտ ընդդէմ է աշխարհային բարեկեցութեան» :

Եւ ֆարհատը կը մտաբերէ Տէր Թողիկի քարոզները .

... «Պէտք է հոգ տանել այս աշխարհի կեանքի համար, նա ունայն եւ անցաւոր է... Իրաքանչիւր մարդու համար Աստուած նշանակել է նրա օրական պարէնը, մէկին շատ, մէկին քիչ... Մարդից իրանից ոչինչ կախում չէ. որքան եւ ջանք գործ դնէր, դարձեալ նա չէ կարող մի մազաչափ ստելացնել կամ պահասացնել ապրուստի այնչափից, որ նշանակել է նրա համար Աստուած»...

Սակայն ձաղկելով ժամանակակից հայ կղերի սպիկարութիւնը, Բաֆֆին, որ կը սիրէ

*) «Կայծեր», հատ. Ա., էջ 459. տպագր. 1883 թ.